# Նոր կորոնավիրուս (COVID-19)

## Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն

### Ուղեցույց բացօթյա ճաշելու վերաբերյալ՝ COVID-19 Պետական հրամանի ընթացքում

Վերջին թարմացումներ.
6/27/20: Տրամադրվել են լրացուցիչ պարզաբանումներ այն մասին, թե ինչ պետք է կրեն անձնակազմի անդամները, եթե չեն կարող կտորե դիմակ կրել, ինչպես նաև այն մասին, թե որ հաճախորդներից չի պահանջվում կտորե դիմակներ կրել:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է գիտական և հանրային առողջապահական փորձաքննության վրա հիմնված փուլային մոտեցում՝ թույլ տալու հանրությանը կրկին օգտվել հասարակական տարածքներից այնպիսի եղանակներով, որոնք կսահմանափակեն COVID-19-ով վարակվելու վտանգը: Այս ուղեցույցի նպատակն է նկատառումներ տրամադրել Քաղաքներին կամ Սննդի Հաստատություններ Շահագործողներին, ովքեր հարցեր ունեն COVID-19-ի վերականգնման փուլում բացօթյա ճաշելու տարածքներ տեղադրելու վերաբերյալ: Անհրաժեշտ է հաշվի առնել ստորև նշված քայլերը, որպեսզի բացօթյա ճաշելու վայրերը շահագործվեն այնպիսի եղանակով, որ բոլորը առողջ մնան:

**1. Սննունդը դուրս տանելու հերթեր.** Սննդի հաստատության շահագործողը պատասխանատու է սոցիալական/ֆիզիկական հեռավորության պահպանման ապահովման և մոնիտորինգի համար, բայց կարող է իրավապահ կամ օրենսդիր մարմինների օգնության կարիքն ունենալ, եթե հասարակության անդամները չհամագործակցեն սննդի օբյեկտներ շահագործողների հետ: Կարող եք մշակել հատակի գծանշանների միանման կիրառման ստանդարտներ՝ սոցիալական/ֆիզիկական հեռավորությունն ուղղորդելու համար:

**2. Կտորե դիմակներ.** Սպասարկող անձնակազմը պետք է կրի կտորե դիմակներ, և միևնույն ժամանակ դեմքի վահաններ, երբ շփվում են հաճախորդների հետ, ովքեր դիմակներ չեն կրում: Անձնակազմի այն անդամները, որոնք առողջական խնդրի պատճառով ազատված են կտորե դիմակ կրելու պահանջից, սակայն կատարում են այնպիսի աշխատանք, որը պահանջում է այլ մարդկանց հետ կանոնավոր շփում, պետք է կրեն թույլատրելի այլընտրանքային տարբերակ, օրինակ՝ ներքևի եզրին կտոր ունեցող դեմքի վահան, եթե նրանց առողջական վիճակը թույլ է տալիս: Ցանկալի է, որ կտորը համապատասխանի կզակի չափերին: Հաճախորդներից պահանջվում է կրել կտորե դիմակներ, երբ նրանք նստած չեն իրենց սեղանի շուրջ, ԵԹԵ կարող են այն ինքնուրույն հանել, չունեն շնչառական խնդիր, կամ բուժաշխատողի կողմից չեն ստացել դիմակ չկրելու հրահանգ: Նկատի ունեցեք, որ 2 տարեկանից ցածր երեխաները (ներառյալ՝ նորածինները) չպետք է կրեն կտորե դիմակներ, իսկ 2-8 տարեկան երեխաները պետք է կտորե դիմակներ կրեն մեծահասակների հսկողության ներքո:

**3. Բացօթյա ճաշել.** Եթե մայթի վրա է, պետք է տրամադրվի առնվազն 6 ոտնաչափ բարձրությամբ անթափանց և մաքրվող պատնեշ՝ ճաշողներին հետիոտններից պաշտպանելու համար, եթե ոտնաչափ սոցիալական/ֆիզիկական հեռավորություն հնարավոր չէ պահպանել: Խորհրդակցեք տեղական գոտիավորման մասնագետների հետ, եթե սեղանները դրվելու են մայթերին կամ կայանատեղիների տարածքում:

**4. Առանձնացրեք պատվիրելու և առաքման տարածքները և մայթեզրից վերցնելու հատվածը-** Բիզնեսներին հարկավոր է խրախուսել, եթե նրանք սննդունդը դուրս տանելու համար են տալիս, ունենալ առանձին պատվիրելու և առաքման տարածքներ: Խորհրդակցեք տեղական գոտիավորման մասնագետների հետ, եթե մայթեզրից վերցնելու կայանատեղիների/գոտիների անհրաժեշտություն կա:

**5. Առցանց պատվերներ և ամրագրումներ.** Բիզնեսներին խրախուսվում է առցանց պատվիրելու հնարավորություն ունենալը և ամրագրման գործընթացի կիրառումը՝ թույլ չտալու սպասելու տարածքներում մարդկանց կուտակումները:

**6. Նշանակեք վերահսկող աշխատակիցներ.** Նշանակեք պատասխանատու աշխատողներ, որոնք կօգնեն վերահսկել սոցիալական/ֆիզիկական հեռավորության պահպանումը զբաղված ժամերին:

**7. Հասարակական տարածքների մաքրման և ախտահանման արձանագրություն.** Մշակեք հաճախակի հպման մակերեսների, ինչպիսիք են՝ նստարանները, պետքարանները, բռնակները, լուսացույցի կոճակները և այլն ախտահանման ընթացակարգեր: Օգտագործեք Շրջակա Միջավայրի Պահպանության Գործակալության (EPA) ցանկում COVID-19-ի համար հաստատված նյութեր և հետևեք տվյալ ապրանքի օգտագործման ցուցումներին: https://www.epa.gov/pesticide-registration/list-n-disinfectants-use-against-sars-cov-2

**8. Փակցրեք հիշեցնող նշաններ.** Փակցրեք նշաններ՝ հիշեցնելու մարդկանց կտորե դիմակների, սոցիալական/ֆիզիկական հեռավորություն պահպանելու և COVID-19-ի ախտանշաններ ունենալու դեպքում տանը մնալու վերաբերյալ:

**9. Ժամանակավոր բացօթյա ճաշել.** Եթե ճաշելու համար առկա են սեղաններ և աթոռներ, մշակեք և կիրառեք ծրագիր և ընթացակարգեր՝ մաքրելու և ախտահանելու դրանց օգտագործումների միջև: Հետիոտների երթևեկությունը նույնպես հարկավոր է հաշվի առնել ավելի զբաղված ժամերին:

**10. Ձեռքերը լվանալու կայաններ կամ ձեռքերի ախտահանիչ միջոցների դիսպենսերներ (առնվազն 60% ալկոհոլի հիմքով)** – Ցանկալի է, որ հանրային վայրերում տեղադրեք ձեռքերը լվանալու կայաններ կամ ձեռքերի ախտահանիչ միջոցների առանց հմպան դիսպենսերներ: